Հաստատում եմ՝

տնօրեն Ն. Կոստանդյան

# Ա Շ Խ Ա Տ Ա Ն Ք Ա Յ Ի Ն   Պ Լ Ա Ն

Երեխաների նկատմամբ բռնությունների կանխարգելման միջոցառումների

| հ/հ | Կիրառվող կանխարգելում | Պատասխանատու |
|---|---|---|
| 1 | Բարձրացնել ուսուցիչների իրազեկությունը երեխայի իրավունքների վերաբերյալ | Տնօրեն, փոխտնօրեն,ՄԽ, դասղեկներ |
| 2 | Վերանայել դասղեկական պլանները՝ շեշտադրելով երեխայի իրավունքները, սովորողի իրավունքներն ու պարտականությունները | Տնօրեն, փոխտնօրեն , դասղեկներ |
| 3 | Կազմակերպել բանավեճեր ուսուցիչների և երեխաների մասնակցությամբ | Փոխտնօրեն, դասղեկներ, ԱԽ նախագահ |
| 4 | ԱԽ-ի միջոցով կազմակերպել ֆոկուս խմբային քննարկումներ,վերհանել երեխաների փոխհարաբերությունների հետ կապված խնդիրներն ու դրանց ծնող պատճառները | Փոխտնօրեն,ԱԽ նախագահ, դասղեկներ |
| 5 | Սեմինարների կազմակերպում <<Երեխայի իրավունքներ>>, <<Սովորողների իրավունքներն ու պարտականությունները>> թեմաներով 6-ից 12-րդ դասարանների սովորողների համար | Տնօրեն,փոխտնօրեն, ԱԽ նախագահ |
| 6 | ԱԽ-ի և դասղեկների համատեղ նախաձեռնությամբ դասղեկի ժամերին քննարկել <<Բռնության բացասական հետևանքները>>, <<Անհանդուրժողականություն>>, <<Երեխաների իրավունքները>>, <<Մեր դպրոցի կանոնները և արժեքները>> թեմաները | Փոխտնօրեն, ԱԽ նախագահ, դասղեկներ |
| 7 | Կազմակերպել հանդիպումներ տարբեր ոլորտի արհեստավարժ մասնագետների հետ /ոստիկան, մանկաբույժ, հոգեբան, հոգևորական և այլն/ | Տնօրեն, փոխտնօրեն, ԱԽ նախագահ, դասղեկներ |
| 8 | Կազմակերպել կինոդիտումներ, ստեղծագործությունների կամ իրական դեպքերի քննարկումներ, վերլուծություններ երեխաների միջև առկա բռնության թեմայով | Տնօրեն, փոխտնօրեն, ԱԽ և ԾԽ նախագահներ, դասղեկներ |
| 9 | Կազմակերպել ներդպրոցական և միջդասարանական մրցույթներ <<Ամենահամերաշխ դասարանը>> խորագրով | Տնօրեն, փոխտնօրեն, ԾԽ, ԱԽ նախագահներ, դասղեկներ |
| 10 | Կազմակերպել և անցկացնել ծնողավարման դասընթացներ երեխաների իրավունքների և նրանց նկատմամբ կիրառվող բռնության դեպքերի վերաբերյալ | Տնօրեն, փոխտնօրեն, ԾԽ նախագահ, դասղեկներ |
| 11 | Աշակերտական խորհրդի կողմից երեխաների իրավունքների վերաբերյալ դրույթների ներկայացում ծնողներին | Փոխտնօրեն, ԱԽ նախագահ, դասղեկներ |
| 12 | Կազմակերպել տնայցեր ԱԽ, ԾԽ և ՄԽ ներկայացուցիչների, սոցիալական աշխատողների և հոգեբանների մասնակցությամբ երեխայի ընտանիքում առկա միջավայրի բարելավման համար | Տնօրեն, փոխտնօրեն, Ծ/Խ, ԱԽ նախագահներ, դասղեկներ |
| 13 | Սոցիալական աշխատողի աջակցությամբ աշխատանքներ տանել երեխաների հետ և նրանց միջոցով ազդել ծնողների կողմից տարվող դաստիարակչական աշխատանքի ոչ ճիշտ ընթացքի վրա | Տնօրեն, փոխտնօրեն, ԾԽ նախագահ, դասղեկներ |
| 14 | Բացահայտել ծնողական խնամքից դուրս մնացած ծնողների անտարբերությանը <արժանացած> երեխաների ընտանիքների խնդիրները և մշակել դրանց լուծման հնարավոր ուղիները | Փոխտնօրեն, ԾԽ նախագահ, դասղեկներ |
| 15 | Ստեղծել <ԾԽ> տեղեկատվական անկյուն դպրոցում, տեղադրել նյութեր բռնությունների մասին և պարբերաբար թարմացնել | Փոխտնօրեն , ԾԽ նախագահ, դասղեկներ |